



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# ***Գյուլտերի հայտեր***

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

**No 10 (75)**

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են հրապարակված 2006 թվականի հոկտեմբերի 2-ից

Երեւան 2006

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների  
նույնականացման միջազգային կոդերը  
ըստ ՄՄՐԿ ST.9 ստանդարտի

- 21 Հայտի համարը
- 22 Հայտի ներկայացման թվականը
- 31 Առաջնային հայտի համարը
- 32 Առաջնային հայտի ներկայացման թվականը
- 33 Երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
- 42 Հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
- 51 Միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54 Գյուտի անվանումը
- 57 Գյուտի ռեֆերատը
- 62 Ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 71 Հայտատուն, երկրի կոդը
- 72 Գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
- 74 Արտոնագրային հավատարմատարը
- 85 Միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
- 86 Միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
- 87 Միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

---

Հրատարակվում է Մտավոր սեփականության  
գործակալության կողմից 2000թ.

Издается Агентством интеллектуальной  
собственности с 2000 г.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3  
Հեռ. 563-267 ընդհանուր բաժին  
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական  
ապահովման բաժին

0010, Երևан, Главный проспект, Дом Правительства 3  
Тел. (374 10) 563-267 общий отдел  
Тел. (374 10) 561-126 отдел информационно-  
технологического обеспечения

E-mail: armpat@cornet.am

## Տեղեկություններ համընդհանուր ծանոթացման դրված գյուտերի հայտերի մասին

(51) (2006)

### A23L 1/48

(21) AM20060090 (22) 08.06.2006

(71) Գեղամ Սևապյան, Երեւան, Էրեբունու 11, քն. 37 (AM), Տատյանա Սկրոչյան, Երեւան, Էրեբունու 11, քն.37 (AM), Նելլի Սարկիսյան, Երեւան, Անդրանիկի 74, քն. 30 (AM), Գայանե Նիկողոսյան, Երեւան, Խահակյան 1/1, քն.24 (AM) (72) Գեղամ Սևապյան (AM), Տատյանա Սկրոչյան (AM), Նելլի Սարկիսյան (AM), Գայանե Նիկողոսյան (AM)

### (54) Երկարատեւ պահպանման ջրազրկված սննդային մթերքի պատրաստման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը եւ կարող է կիրառվել երկարատեւ պահպանման ջրազրկված սննդային մթերքի պատրաստման համար:

Սննդային մթերքի բաղադրամասերը ենթարկում են ջերմամշակման, մանրացնում եւ ձեւավորում են: Ստացված զանգվածը ջրազրկում են երկփուլ չորացմամբ, առաջին փուլում 45-50°C ջերմաստիճանում մինչեւ 22% մնացորդային խոնավություն, երկրորդ փուլում 5-8 րոպեի ընթացքում 90°C ջերմաստիճանի պայմաններում եւ փաթեթավորում են, ընդ որում, սննդային մթերքը պատրաստում են բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. % . բանջարեղեն 48.0 - 62.0, ընկուզապտուղների միջուկ 21.0 - 32.8, ցորենի ալյուր 4.3 - 7.5, սխտոր տրորած 4.1 - 5.4, աղ կերակրի 2.0 - 2.5, խմելի-սունելի 1.5 - 2.2, պղպեղ սեւ 1.0 - 1.1, պղպեղ կարմիր 1.0 - 1.05, տիմյան 0.0 - 1.0, խմելու սոդա 0.05 - 0.1, կիտրոնաթթու կամ ասկորբինաթթու 0.03 - 0.05:

Ապահովվում է սննդային մթերքի երկարաժամկետ պահպանումը:

(51) (2006)

### A61C 8/00

(21) AM20060126 (22) 26.07.2006

(71) Յուրի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր Խար-

բերդ 10/14 (AM), Աննա Պողոսյան, Երեւան, Նալբանդյան 25/14, քն.104 (AM), Դավիթ Պողոսյան, Երեւան, Յամբարձումյան 18, քն.41 (AM)

(72) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)

### (54) Վերին ծնոտի ենթավերվոսկրային ատամնային պատրուսման եղանակ

(57) Մերկացնում են վերին ծնոտի ատամնաբուսային ելունը, բարձրացնում են վերին ծնոտի ծոցի հատակը: Այնուհետեւ ձեւավորում են ակոսներ ատամնային պատրուսի գլխիկների հիմքի ու անդրաձիգ էլեմենտների համար եւ ստանում են ատամնաբուսային ելունի դրոշմը, որի ձեւով պատրաստում են պատրուսը, ապա այն տեղադրում են եւ սեւեռում:

Կանխարգելվում է վերին ծնոտի ծոցի թափածակում:

(51) (2006)

### A61K 39/135

(21) AM20060044 (22) 28.03.2006

(71) Սլավա Երվանդի Ներսիսյան, Երեւան, Գայի պող. 2, քն.118 (AM)

(72) Սլավա Երվանդի Ներսիսյան (AM), Ժան Իշխանի Յակոբյան (AM), Լեւոն Աշոտի Ռուխիկյան (AM), Տիգրան Յակոբի Մարկոսյան (AM), Յենրիկ Եղիշեի Ոսկանյան (AM), Խաչիկ Վազգենի Սարգսյան (AM), Մարինե Բենիկի Ղազարյան (AM)

### (54) Հակադաբաղային պատվաստանյութ

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժական կենսատեխնոլոգիային եւ կարող է կիրառվել խոշոր եւ մանր եղջյուրավոր անասունների դաբաղի կանխարգելման համար:

Հայտարկվող հակադաբաղային պատվաստանյութը ներառում է A<sub>22</sub> տիպի դաբաղի լապիսիզացված վիրուսի №550 շտամից (ВНИИ №550) եւ O<sub>1</sub> տիպի դաբաղի լապիսիզացված վիրուսի №194 շտամից (ВНИИ №194) ստացված հակազենային նյութեր, ալյու-

մինի հիդրօքսիդի դոնորոլ էլ որպես ադյուվանտ՝ երկպարույր ՌՆԹ-ի կալցիումական ձեւը: Բաղադրամասերը վերցված են հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). հակազենային կոմպոնենտներ 64,4-69,6, ալյումինիումի հիդրօքսիդի դոնորոլ 30,0-35,0, երկպարույր ՌՆԹ-ի կալցիումական ձեւ 0,4-0,6: Պատվաստանյութում հակազենային կոմպոնենտի հարաբերակցությունը հավասար է 1:1:

Բարձրացվում է պատվաստանյութի իմունազենային ակտիվությունը եւ երկարացվում իմունիտետի լարվածության տեւողությունը:

(51) (2006)

**A63B 1/00**

(21) AM20060148 (22) 30.08.2006

(71) Կարեն Վարդանյան, Երեւան, Դ. Դեմիրճյան փող. 1-ին փակ. 33 (AM)

(72) Կարեն Վարդանյան (AM)

**(54) Մարմամարզական վարժությունների սարք**

(57) Գյուտը վերաբերում է մարմամարզական սարքերին եւ կարող է կիրառվել տնային պայմաններում եւ մարզական դահլիճներում: Սարքն ունի անշարժ մակերեսային վրա ամրակցվող առնվազն մեկ հենարանային տարր, որն ունի իր համաչափությամբ առանցքի ուղղությամբ արված երկայնական ուղղորդիչ փորակ եւ լայնական թեք փորակներ: Փորակի մեջ տեղադրված է սողան, որին կոշտ ամրակցված է չորսակ: Չորսակը տրված բարձրության վրա սեւեռելու համար թեք փորակի մեջ տեղադրում են զուլակ: Հենարանային տարրերը կարող են ամրակցվել ինչպես երկու զուգահեռ, այնպես էլ մեկ պատի վրա:

Լայնացվում են սարքի օգտագործման հնարավորությունները, 3 նկ.:

(51) (2006)

**A63H 33/04**

(21) AM20060112 (22) 14.07.2006

(71) Արտաշես Կարլենի Պապյան, Երեւան, Հերացու 2ա, բն.39 (AM)

(72) Արտաշես Կարլենի Պապյան (AM)

**(54) Կոնստրուկտոր «Կրիստ» ըստ Պապյանի**

(57) Գյուտը վերաբերում է կուլտուրակենցա-

ղային նշանակության առարկաներին, մասնավորապես՝ կոնստրուկտորներին, որոնց տարրերի հավաքածուների միջոցով կարելի է հավաքել տարբեր բարդության հարթ եւ ծավալային երկրաչափական պատկերներ:

Կոնստրուկտորն ունի ձողերի եւ ամրակցող տարրերի հավաքածուներ: Հավաքածուներում ձողերը կատարված են մետաղյա շյուղերի տեսքով, իսկ ամրակցող տարրերը պատրաստված են սիլիկոնից, որի կարծրությունը ըստ Շորի 16-23 միավոր է, իսկ ձգունության մոդուլը՝ 0,4-0,6 ՄՊա:

Պարզեցվում է կոնստրուկտորի կառուցվածքը, ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2006)

**B01B 20/06**

**B01B 20/10**

**C02F 1/28**

(21) AM20060130 (22) 27.07.2006

(71) Գագիկ Հովհաննեսի Թորոսյան, Երեւան, Սայաթ-Նովայի պող. 37, բն.10 (AM), Աիդա Ռազմիկի Ալեքսանյան, Երեւան, Ավան թաղամաս, Զուչակի հատված 18, բն.22 (AM)

(72) Գագիկ Հովհաննեսի Թորոսյան (AM), Աիդա Ռազմիկի Ալեքսանյան (AM), Վիլենա Հակոբի Մարտիրոսյան (AM)

**(54) Անիլին պարունակող հոսքաջրերի մաքրման սորբենտ**

(57) Գյուտը վերաբերում է բնապահպանությանը: Սորբենտը պարունակում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%. ալյումինի օքսիդ՝ 29,9-36,0, կալցիումի սուլֆիդ՝ 50,50-58,55, սիլիցիումի օքսիդ՝ 7,4-9,0, նատրիումի օքսիդ՝ 3,4-4,5:

Ապահովվում է հոսքաջրերի մաքրման բարձր աստիճան:

(51) (2006)

**C07C 9/00**

**C07C 211/00**

(21) AM20060106 (22) 10.07.2006

(71) Գագիկ Հովհաննեսի Թորոսյան, Երեւան, Սայաթ-Նովայի պող. 37, բն. 10 (AM), Անուշ

Լավրենտի Զարուբյունյան, Երեւան, Արծրունու 90, բն.12 (AM), Լուսինե Անատոլիի Իսակովա, Երեւան, Րաֆֆու 21, բն.16 (AM)

(72) Գագիկ Յովհաննեսի Թորոսյան (AM), Անուշ Լավրենտի Զարուբյունյան (AM), Լուսինե Անատոլիի Իսակովա (AM)

**(54) Էթիլ 2-ացետիլ-կարբամոհիլպենտանոատը որպես կոմպլեքսագոյացուցիչ**

(57) Հայտարկված է Էթիլ 2-ացետիլ- 4 - կարբամոհիլպենտանոատը, որը կարող է կիրառվել որպես կոմպլեքսագոյացուցիչ:

Ացետաքացախաթթվի եթերը սենյակի ջերմաստիճանում ենթարկում են փոխազդեցության մեթիլակրիլամիդի հետ կալիումի հիդրօքսիդի 10 նորմալային ջրային լուծույթի եւ միջֆազային կատալիզորդի առկայությամբ: Արգասիքը առանձնացնում են ռեակցիայի խառնուրդից լուծահանմամբ՝ բենզոլով:

Ընդլայնվում է կոմպլեքսագոյացուցիչների տեսականիս:

(51) (2006)

**C07D 487/00**

(21) AM20060132 (22) 28.07.2006

(71) Ռոբերտ Ղազարյան, Երեւան, Ծովակալ Իսակովի 28, բն.11 (AM), Լիդա Սահակյան, Երեւան, Նազարեթ Սուրենյան 11բ, բն.34 (AM), Արտակ Թովմասյան, Արարատի մարզ, Մասիս, 3-րդ թաղ. 16, բն. 29 (AM), Գրիգոր Գյուլխանդանյան, Երեւան, Եզնիկ Կողբացու 42, բն. 74 (AM)

(72) Ռոբերտ Ղազարյան (AM), Լիդա Սահակյան (AM), Արտակ Թովմասյան (AM), Գրիգոր Գյուլխանդանյան (AM)

**(54) Միաժամանակ ֆունգիցիդային եւ մանրէասպան ակտիվություն ունեցող ֆենֆիտինի (a+ b) արծաթե կոմպլեքս**

(57) Հայտարկված է ֆենֆիտինի (a+b) արծաթե կոմպլեքս:

Կոմպլեքսը ստանում են համապատասխան պորֆիրինի եւ արծաթի նիտրատի փոխազդեցությամբ երկմեթիլֆորմամիդի կամ եթանոլի միջավայրում:

Կոմպլեքսը ունի միաժամանակ ֆունգիցիդային եւ մանրէասպան ակտիվություն եւ կարող է կիրառվել բժշկության մեջ:

(51) (2006)

**C22B 34/00**

**C22B 1/00**

**C22B 61/00**

(21) AM20060069 (22) 28.04.2006

(71) Կլիմենտ Ենոքի Հակոբյան, Սյունիքի մարզ, Կապան, Թումանյան 9, բն.25 (AM), Հոնգ Յոնգ Սոհն, Յուլթա, Սուլթ Լեյք Սիթի, Յուլթաթեր Դր. 4521 (US)

(72) Կլիմենտ Ենոքի Հակոբյան (AM), Հոնգ Յոնգ Սոհն (US), Արմեն Կլիմենտի Հակոբյան (AM), Էդգար Ռոդոլֆո Բլանշ (US), Ռոման Շմավոսի Նավասարդյան (AM), Վլադիմիր Ալեքսանդրովիչ Բոյուկով (RU), Վլադիմիր Գիլեվիչ Լեոնտյեվ (RU), Օլեգ Իվանովիչ Յիրբին (RU)

**(54) Մոլիբդենի սուլֆիդի խտանյութի վերամշակման եղանակ**

(57) Մոլիբդենի սուլֆիդի խտանյութը թրծում են գազային միջավայրում 900-1000°C ջերմաստիճանում հումքի եւ գազի հակահոս մատուցմամբ, որից հետո մշակում են հեռացող գազերը՝ ստանալով տարրական ծծումբ եւ ռենիում պարունակող օքսիդացված մոլիբդենային միջանկյալ արգասիքը օքսիդացնող թրծմամբ 400-480°C ջերմաստիճանում՝ ստանալով մոլիբդենի եռօքսիդ եւ ռենիում պարունակող գազ: Որպես գազային միջավայր օգտագործում են ջրային գոլորշու եւ օդի խառնուրդ, ընդ որում գոլորշու եւ օդի զանգվածային հարաբերակցությունը խառնուրդում կազմում է (7-8) : 1: Խառնուրդի եւ օդի զանգվածային հարաբերակցությունը (4,5-8,0) : 1 է, իսկ թրծումը կատարում են հորային վառարանում:

Ապահովվում է խտանյութի վերամշակման եղանակի պարզեցում եւ ինտենսիվացում, ինչպես նաեւ խտանյութի մեջ պարունակվող բոլոր բաղադրիչների կորզումը:

(51) (2006)

**E04C 41/00**

**E21C 41/26**

(21) AM20060128 (22) 26.07.2006

(71) Մաքսիմ Հակոբյան, Զաջարան, Չարենցի 5, բն.4 (AM), Բորիկ Մկրտչյան, Երեւան, Գայի 4, բն.109 (AM)

(72) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Մկրտչյան (AM), Կարեն Մկրտչյան (RU), Վահե Հակոբյան (AM)

**(54) Օգտակար հանածոների հանքավայրերի բաց մշակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը եւ կարող է կիրառվել օգտակար հանածոների հանքավայրերի բաց մշակման ժամանակ:

Հանքամարմնի կենտրոնում անցկացնում են հանքիջանցք, վերջինիս ուղղությամբ անցնում են թեք խրամ, որը հորիզոնական ուղղությամբ զարգացնելով միացնում են հանքիջանցքի հետ: Այնուհետեւ հանքիջանցքի մոտ ձեւավորում են միմիանց հետ խաչվող փոխուղահայաց խրամներ, դրանք ձեւավորում են հորիզոնական, բացահանքի կենտրոնից դեպի եզրերը: Խրամների եւ դրանցով առանձնացվող հանքամարմնի բաղկացուցիչ զանգվածների հանույթն իրականացնում են հանքիջանցքին հարող մասերից դեպի բացահանքի եզրերը, իսկ կից հանքաստիճանները մշակում են բացահանքի եզրերից՝ մեկը մյուսին ընդառաջ:

Ինտենսիվացվում է մշակման եղանակը, 1 նկ.:

(51) (2006)

**E21C 41/00**

**E21C 41/26**

(21) AM20060127 (22) 26.07.2006

(71) Մաքսիմ Հակոբյան, Զաչարյան, Չարենցի 5, քն.4 (AM), Բորիկ Մկրտչյան, Երեւան, Գայի 4, քն.109 (AM)

(72) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Մկրտչյան (AM), Կարեն Մկրտչյան (RU), Վահե Հակոբյան (AM)

**(54) Օգտակար հանածոների հանքավայրերի բաց մշակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել լեռնային բացահանքերի շահագործման ժամանակ:

Հանքամարմնի կենտրոնում անցկացնում են հանքիջանցք, վերջինիս ուղղությամբ անցնում են թեք խրամ, որը հորիզոնական ուղղությամբ զարգացնելով միացնում են հանքիջանցքի հետ: Այնուհետեւ թեք խրամի փորվածքը փոխուղահայաց ուղղություններով դեպի բացահանքի եզրերը զարգացնելով, ձեւավորում

են միմիանց հետ խաչվող, կտրող խրամներ: Հանքիջանցքը տեղակայում են մեկից ավել հանքաստիճաններով մշակվող հանքամարմնի բաղկացուցիչ չորս զանգվածներից մեկի կենտրոնական եզրի մոտ: Վերջինիս վրա ձեւավորում են հանքաթեքատներ, որոնց միջոցով հանքամարմնի զանգվածի հորիզոնների հարթակները միացնում են հանքիջանցքի հետ: Թեք խրամին հարող մյուս երկու հանքամարմնիների զանգվածների հանույթն իրականացնում են կտրող խրամների զարգացմանը զուգահեռ՝ կենտրոնից դեպի բացահանքի եզրերը: Կտրող խրամների ձեւավորման ավարտից հետո հանքամարմնի զանգվածների հարակից մշակումը տանում են բացահանքի եզրերից՝ մեկը մյուսին ընդառաջ:

Ինտենսիվացվում է մշակման եղանակը, 2 նկ.:

(51) (2006)

**F16H 21/00**

(21) AM20060099 (22) 21.06.2006

(71) Լեւոն Թումանի Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM), Վանիկ Գրիգորի Աղամյան, Գյումրի, 26 Կոմիսարների 82ա (AM), Գեւորգ Միքայելի Չայիմցյան, Գյումրի, տնակ 231/203 (AM), Արմեն Լեւոնի Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM)

(72) Լեւոն Թումանի Մանանդյան (AM), Վանիկ Գրիգորի Աղամյան (AM), Գեւորգ Միքայելի Չայիմցյան (AM), Արմեն Լեւոնի Մանանդյան (AM)

**(54) Կենտրոնական ուժի դաշտում պարաբոլական ուղեծրով շարժվող կետի դիրքի եւ արագության ուղղության որոշման կուլիսալծակային մեխանիզմ**

(57) Գյուտը վերաբերում է մեխանիկայի բնագավառին, մասնավորապես՝ կենտրոնական ուժի դաշտում պարաբոլական ուղեծրով շարժվող կետի դիրքը որոշող սարքերին:

Մեխանիզմն ունի անշարժ ուղղորդ, ծնկավոր լծակ, որին հողակապորեն միացված են ձողերից եւ սողնակներից կազմված երկու օղակ, որոնց վրայով սահող սողնակների միջոցով գծվում է պարաբոլ, որի պարամետրը հավասար է ծնկավոր լծակի մի ծնկի երկարությանը, իսկ ծնկավոր լծակի մյուս ծունկն անցնում

Է պարաբոլի կիզակետում տեկակայված հողակային օղակի միջով: Մեխանիզմն ունի լրացուցիչ լծակ, որի վրա արված է ակոս: Լրացուցիչ լծակի մի ծայրը հողակապորեն միացված է պարաբոլի կիզակետում տեղակայված օղակի պտտման կենտրոնին, մյուս ծայրը՝ անշարժ ուղղորդով սահող հողակապին: Լրացուցիչ լծակի վրա սահելու հնարավորությամբ տեղակայված է սողնակից եւ ձողից կազմված օղակ, որի ձողի ուղղությունն իրենից ներկայացնում է տվյալ պահին կետի արագության ուղղությունը:

Ընդլայնվում են մեխանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2006)

**F16H 29/00**

(21) AM20060102 (22) 26.06.2006

(71) Արման Յովհաննիսյան, Երեւան, Գրիգոր Լուսավորիչի 12, բն.2ա (AM)

(72) Արման Յովհաննիսյան (AM)

**(54) Արագությունների փոխանցման տուփ**

(57) Գյուտը վերաբերում է շարժիչի արագությունների փոխանցման տուփին:

Արագությունների փոխանցման տուփն ունի ուղղորդող եւ ուղղորդվող հանգույցներ, իրենց լիսեռներով: Հանգույցները տեղակայված են իրար սիմետրիկ եւ ունեն միեւնույն կառուցվածքը: Հանգույցների լիսեռների վրա ուղղահայաց կոշտ ամրակցված են թելաձողեր, որոնց վրա հագցված են դրանց վրա շարժվելու հնարավորություն ունեցող սնամեջ գլանիկներ, իսկ հանգույցների լիսեռների վրա հագցված են սնամեջ գլաններ, որոնց վերին հատվածամասում փորված են ատամնավոր սանդղակներ: Ատամնավոր սանդղակների հետ կառչման հնարավորություն ունեն հիդրավիկ սնուցման աղբյուրին միակցված ատամնանիվները: լանիկները շարժաձողերի միջոցով շարժական միացմամբ միացած են գլաններին: Ուղղորդող եւ ուղղորդվող հանգույցների գլանիկները փոխկապակցված են իրար միակցման ձողերի միջոցով, որոնցից մեկը սնամեջ է, իսկ մյուսը հնարավորություն ունի տեղաշարժվելու սնամեջ ձողի մեջ:

Պարզեցվում է կառուցվածքը եւ աշխատանքի սկզբունքը, 10 նկ.:

(51) (2006)

**F41G 1/00**

(21) AM20060110 (22) 13.07.2006

(71) Վանիկ Գրիգորի Ադամյան, Գյումրի, 26 Կոմիսարների 82ա (AM), Մարտին Նազարի Կարապետյան, Երեւան, Անդրանիկի 80, բն.18 (AM), Լեւոն Թումանի Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM), Գեորգ Միքայելի Չայիմցյան, Գյումրի, Մանուշյան 231/203 (AM) (72) Վանիկ Գրիգորի Ադամյան (AM), Մարտին Նազարի Կարապետյան (AM), Լեւոն Թումանի Մանանդյան (AM), Գեորգ Միքայելի Չայիմցյան (AM)

**(54) Հրետանային նշանոց**

(57) Գյուտը վերաբերում է զենքերին, մասնավորապես՝ հրետանային նշանոցներին, եւ կարող է օգտագործվել դրանք նպատակակետին նշանառելու գործընթացում:

Սարքն ունի իրան, իրանին կոշտ ամրակցված վերին եւ ստորին հողակապեր, որոնք դիրքավորված են ուղղաձիգ գծով եւ որոնց միջոցով իրանին միակցված է հողակապավոր հավասարակողմ քառօղակ մեխանիզմ, հորիզոնական ուղղորդ, որը տեղակայված է իրանի վերին հողակապի մակարդակով եւ առնվազն մեկ ծայրով կոշտ ամրակցված է իրանին: Սարքն ունի նաեւ հորիզոնական ուղղորդի վրա տեղակայված սողնակ, որին ամրակցված է ցուցիչ, ցուցիչի տեղաշարժումների միջակայքին համապատասխան սանդղակ, որն ամրակցված է իրանին հորիզոնական դիրքավորմամբ, կուլիս եւ ճոճալծակ, որոնք մեկ ծայրերով հողակապորեն միակցված են իրանի ստորին հողակապին: Կուլիսը հողակապավոր սողնակի միջոցով կապված է քառօղակի հանդիպակաց հողակապի հետ: Ճոճալծակը փոխուղղահայաց անցքերով կցորդիչի եւ նրանով անցնող հողակապավոր շարժաթելի միջոցով կապված է հորիզոնական ուղղորդի վրա տեղակայված սողնակի հետ: Սանդղակն իրականացված է փոխովի, իսկ նշանոցն ունի սանդղակների լրակազմ, որից խնդրի նախնական պայմաններին համապատասխանող սանդղակն ամրակցված է իրանին սեւեռապնդման պտուտակների միջոցով:

Ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2006)

**F41G 1/00**

(21) AM20060109 (22) 13.07.2006

(71) Վանիկ Գրիգորի Ադամյան, Գյումրի, 26 Կոմիսարների 82ա (AM), Մարտին Նազարի Կարապետյան, Երեւան, Անդրանիկի 80, բն. 18 (AM), Գեւորգ Միքայելի Չայիմցյան, Գյումրի, Մանուշյան 231/203 (AM), Լեւոն Թումանի Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM)

(72) Վանիկ Գրիգորի Ադամյան (AM), Մարտին Նազարի Կարապետյան (AM), Գեւորգ Միքայելի Չայիմցյան (AM), Լեւոն Թումանի Մանանդյան (AM)

**(54) Հրետանային նշանոցի մեխանիկական հանգույց**

(57) Գյուտը վերաբերում է գեներին, մասնավորապես՝ հրետանային նշանոցների մեխանիկական հանգույցներին, եւ կարող է օգտագործվել դրանք նպատակակետին նշանառելու գործընթացում:

Սարքն ունի իրան, իրանին կոշտ ամրակցված առաջին՝ վերին եւ երկրորդ հողակապեր, որոնք դիրքավորված են ուղղաձիգ գծով եւ որոնց միջոցով իրանին միակցված է հողակապավոր հավասարակողմ քառօղակ մեխանիզմ: Սարքն ունի նաեւ հորիզոնական ուղղորդ, որը տեղակայված է իրանի առաջին հողակապի մակարդակով եւ առնվազն մեկ ծայրով կոշտ ամրակցված է իրանին, կուլիս եւ ճոճալծակ, որոնք մեկ ծայրերով հողակապորեն միակցված են իրանի երկրորդ հողակապին: Կուլիսը հողակապավոր սողնակի միջոցով կապված է քառօղակի հանդիպակաց հողակապի հետ: Ճոճալծակը փոխուղղահայաց անցքերով կցորդիչի եւ նրանով անցնող հողակապավոր շարժաթելի միջոցով կապված է հորիզոնական ուղղորդի վրա տեղակայված սողնակի հետ: Առաջին եւ երկրորդ հողակապերի հետ միեւնույն ուղղաձիգ ուղղի վրա իրանին կոշտ ամրակցված է երրորդ՝ ստորին հողակապը, որի վրա տեղակայված է երկրորդ կուլիսը: Ուղղորդի սողնակին հողակապորեն միակցված է երկրորդ սողնակը, որով անցնում է երկրորդ կուլիսը:

Ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2006)

**G01R 27/26**

(21) AM20060108 (22) 11.07.2006

(71) Բորիս Մամիկոնյան, Գյումրի, Ն. Շնորհալու 25, բն. 24 (AM), Խորեն Մամիկոնյան, Գյումրի, Ն. Շնորհալու 25, բն. 24 (AM)

(72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)

**(54) Էլեկտրական շղթայի տարրերի մեծության չափման եղանակ եւ դրա իրականացման սարք**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրաչափողական տեխնիկային, մասնավորապես՝ ակտիվ, ունակային կամ ինդուկտիվ դիմադրության չափմանը, եւ կարող է օգտագործվել էլեկտրական շղթաների տարրերի մեծությունը հաստատուն հոսանքով չափելու համար:

Ըստ հայտարկվող եղանակի չափիչ շղթային մատուցում են հաստատուն հոսանքի հեղանիշային լարում եւ կատարում չափիչ շղթայի միջին կետի լարման ակնթարթային արժեքի երկու իրար հաջորդող չափում: Յուրաքանչյուր անգամ չափում են չափիչ շղթայի միջին կետի լարման ակնթարթային արժեքի եւ հեղանիշային լարման հարաբերությունը, իսկ չափվող էլեկտրական մեծությունը որոշում են համապատասխան բանաձեւով: Սարքն ունի հեղանիշային լարման հաստատուն հոսանքի աղբյուր, բանալի, չափիչ շղթա, անալոգաթվանշանային կերպափոխիչ, հաշվիչ եւ կառավարման բլոկներ եւ թողարկման դող: Հեղանիշային լարման աղբյուրի ելքը միացված է բանալու մուտքին: Անալոգաթվանշանային կերպափոխիչի ելքը միացված է հաշվիչ բլոկի ինֆորմացիոն մուտքին, կառավարման մուտքը՝ կառավարման բլոկի առաջին ելքին: Կառավարման բլոկի երկրորդ ելքը միացված է բանալու կառավարման մուտքին, երրորդ ելքը՝ հաշվիչ բլոկի կառավարման մուտքին: Հաշվիչ բլոկի սկզբնական տեղադրման մուտքը միացված է կառավարման բլոկի մուտքին եւ թողարկման դողին: Սարքը լրացուցիչ ունի լարումների բաժանման բլոկ, որի բաժանարարի մուտքը միացված է չափիչ շղթայի մուտքին, բաժանելիի մուտքը՝ չափիչ շղթայի միջին կետին, իսկ ելքը՝ անալոգաթվանշանային կերպափոխիչի ինֆորմացիոն մուտքին:

Բարձրացվում է չափման ճշգրտությունը, 2 նկ.:

(51) (2006)

**G01R 33/12**

(21) AM20060136 (22) 01.08.2006

(71) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM)  
 (72) Գելորգ Արտավազդի Կարդաշյան (AM), Արտաշես Գելորգի Կարդաշյան (AM)

**(54) Ֆեռոմագնիսական փոշենյութերի մագնիսական պարամետրերի որոշման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է մագնիսական չափումներին, մասնավորապես՝ փոփոխական մագնիսական դաշտում ֆեռոմագնիսական նյութերի մագնիսական պարամետրերի չափմանը եւ կարող է օգտագործվել մագնիսական լաբերի եւ այլ խառնուրդների պատրաստման ընթացքում:

Ֆեռոմագնիսական փոշենյութը լցնում են ոչ ֆեռոմագնիսական նյութից պատրաստված գլանաձեւ անոթի մեջ, որի պատերին պարուրած է դասավորված են Յոլլի տանգենցիալ կերպափոփոխներ, իրականացնում են ֆեռոմագնիսական նյութի փորձանմուշի սիմետրիկ մագնիսացում եւ որոշում  $B(t)$  մագնիսական ինդուկցիայի ու  $H(t)$  մագնիսական դաշտի լարվածության արժեքները: Կոերցիտիվ ուժը  $H(t)$  որոշում են մագնիսական դաշտի լարվածության այն ակնթարթային արժեքով, որը համապատասխանում է  $B(t)$  մագնիսական ինդուկցիայի գրոյական արժեքին, երբ այն դիսամիկ մագնիսացման ռեժիմում դրական կիսապարբերությունից անցնում է բացասականի:

Ընդլայնվում է փորձարկվող ֆեռոմագնիսական նյութերի տեսականին, նվազեցվում է չափման գործընթացի աշխատատարությունն ու տեւողությունը, 1 նկ.:

(57) Գյուտը վերաբերում է հաշվողական համակարգերի միջոցով տվյալների մշակման գործողություններ ընդգրկող ապահովագրության եղանակներին, մասնավորապես՝ փոխադարձ փոխանակության սկզբունքով վերաապահովագրության կազմակերպման եղանակին:

Գյուտի համաձայն յուրաքանչյուր ապահովագրական կազմակերպության համար համակարգում ձեւավորում են կայուն եւ լողացող մասերից կազմված երաշխավորության գումարի հաշիվ եւ սահմանում են վերաապահովագրման իրավունակության ուղիղ կախվածություն յուրաքանչյուր վերաապահովագրության դիմաց վերցվող պարգեի գումարից եւ վերաապահովագրության կանոններով սահմանված որոշակի օրերի ընթացքում նրա կողմից փաստացիորեն զիջված պատասխանատվությունների դիմաց վճարված պարգեւների հանրագումարից: Յուրաքանչյուր կազմակերպության կողմից նշված կանոններով սահմանված որոշակի արտոնյալ ժամանակահատվածից հետո ներկայացված առաջարկը զրկում են համակարգին մասնակցող այլ կազմակերպությունների կողմից դիտարկվելու հնարավորությունից, եթե առաջարկ ներկայացնելու օրվան նախորդող կանոններով սահմանված որոշակի օրերի ընթացքում նրա կողմից ընդունված պատասխանատվությունների դիմաց ստացված պարգեւների հանրագումարը պակաս է երաշխավորության գումարի հաշվի կայուն մասում եղած գումարից:

Ապահովվում է կազմակերպության սնանկացման հավանականության նվազեցում եւ վերաապահովագրության արդյունավետության բարձրացում, 7 նկ.:

(51) (2006)

**G06Q 40/00**

(21) AM20060141 (22) 11.08.2006

(71) Յովհաննես Մկրտիչի Բուրմանյան, Երևան, Տոլստոյի 24 (AM)  
 (72) Յովհաննես Մկրտիչի Բուրմանյան (AM)

**(54) Փոխադարձ փոխանակության սկզբունքով վերաապահովագրության կազմակերպման եղանակ**

(51) (2006)

**H05F 3/02**

(21) AM20060095 (22) 15.06.2006

(71) Սերոբ Նշանի Ենգիբարյան, Երևան, Գրիբոյեդովի 5ա, բն. 44 (AM), Վոլոդյա Ղազարի Աբրամյան, Սանկտ-Պետերբուրգ, Կիրոլևայա 35, բն. 5 (RU)

(72) Սերոբ Նշանի Ենգիբարյան (AM), Վոլոդյա Ղազարի Աբրամյան (RU)

**(54) Էլեկտրականացած մեկուսիչ հեղուկների ստատիկական էլեկտրականության լիցքերի հեռացման սարքավորում**

(57) Գյուտը վերաբերում է անվտանգության եւ հակահրդեհային պաշտպանության տեխնիկային:

Սարքը տարողության մեջ գտնվող հեղուկի մակերեւոյթին ունի էլեկտրահաղորդիչ լողաններ, որոնց քանակը բավարար է տարողության կտրվածքը լողացող հաղորդիչ շերտով

ծածկելու համար: յուտի համաձայն յուրաքանչյուր լողանի ծանրության կենտրոնը շեղված է իր երկրաչափական կենտրոնից, ընդ որում լողանի զանգվածը որոշված է ծավալի 80-90 %-ի խորասուզման պայմանից, իսկ դրանց քանակը բավարար է լողանների առնվազն մեկ լրացուցիչ շերտ կազմելու համար:

Բարձրացվում է ստատիկական էլեկտրականության լիցքերի հեռացման հուսալիությունը եւ արդյունավետությունը, 3 նկ.: